ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

23 հուլիսի 2021 թվականի N 197-Ա

ՀՍԿԻՉ ԳՆՄԱՄԲ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 22-ի թիվ 130-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների ոչնչացման աշխատանքային խումբ՝ (այսուհետ նաև՝ Աշխատանքային խումբ) հաստատելով դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խումբը իր իրավասություններն իրականացնում է անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցությամբ:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

2021թ. հուլիսի 23
Երևան

competition.am կայքում հրապարակման օրը՝ 26 հուլիսի, 2021 թվական:

Հավելված
Մրցակցության պաշտպանության
հանձնաժողովի գլխավոր
քարտուղարի 2021 թվականի հուլիսի
23-ի թիվ 197-Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀՍԿԻՉ ԳՆՄԱՄԲ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ՈՉՆՉԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Դ. Հովհաննիսյան (նախագահ)	-Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գլխավոր քարտուղարի տեղակալ
Ա. Հովհաննիսյան	-Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության երկրորդ բաժնի գխավոր մասնագետ
Մ. Խաչատրյան	-Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության առաջին բաժնի ավագ մասնագետ
Ա. Յոլչյան	-Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի վարչատնտեսական վարչության պետի տեղակալ
Ա. Սահակյան	-Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի վարորդ